

Լ՛նկերութիւնը բարածուխի հանքը բովա-
գործելու համար կազմակերպեց և մասամբ շը-
րանախանութիւնը, մասամբ վրացիներին: Ինչ-
պէս յայտնի է, հանքը բովագործելու իրա-
ւունքի մեծ մասը պատկանում է պ. Ն. Նի-
կոլաձէին:

Ինչ որ վերաբերում է աշխատող ձեռքերին,
Խմելէթի գիւղերը ներկայացնելու են բաւա-
կան քանակութիւն մշակիչներ:

Գ. Ա.

ՆԱՄՍԱԿ ՎԱՐԴԱՇԷՆԻՑ

Ղուբա և Նուխի քաղաքները կապած չեն ու-
ղիւղ փոստի ճանապարհով, այնպէս որ առաջի-
նից ղէպի վերջինը ճանապարհորդել ցանկացողը
պէտք է կամ երկար պտոյտ անի, անցնելով Շա-
մախու վրայով, կամ անցնելու բարձր ձիւնա-
պատ սարերով: Այս վերջինի ուղղութիւնը ըն-
տրելու է եւս, որովհետեւ այս ճանապարհորդու-
թիւնս, ինչպէս և նախընթացները եւ ձիւղ էի
կատարում: Շահադիլ գագաթը մի կողմ թող-
նելով, եւ անցկացաւ խնայաւոր գիւղից Սալա-
վատի բարձրութիւնով (11,000 ոտնաչափ) և իջաւ
ղէպի Նուխու հարուստ և պողաբեր հովիտը, որ
այգիները գրեթէ մի անընդհատ շղթայ է կազ-
մում: Այս տեղերը գրեթէ ամբողջապէս բնակե-
ցրած են թաթարներով, որոնց գլխաւոր պա-
րագլուխները մէկն է չերամապահութիւնը, որ
խաղիս ճանապարհորդի աչքի է ընկնում, երբ նա
անցնում է թիկնիկների լայնատարած այգիներով:
Շերամապահութեան մասին խօսելու միւս ան-
գամի թողնելով, եւ այս անգամ պէտք է աշխա-
տեմ ընթերցողին ներկայացնել այն տպաւորու-
թիւնները, որ եւս ստացաւ մտնելով Վարդաշէն
հայ գիւղը, որ գտնվում է այս ճանապարհի վերա
մօտ 40 վերստ հեռու Նուխի քաղաքից:

Գրեթէ երկու ամիս ճանապարհորդելով այն-
պիսի երկիրներում, ուր տեղական լեզուները ինձ
համար անծանօթ և ուրեմն անհասկանալի էին,
եւ ի հարկէ մի առանձին ուրախութիւն պէտք է
զգայի, մտնելով մի հայ գիւղ: Կարծեմ, որ ա-
նապատում ճանապարհորդողը չը պէտք է աւելի
ուրախանալ կարողանար, երկար անմարդաբնակ
տարածութիւն անցնելուց յետոյ, տեսնելով մէկ
օտարին:

Չը գիտեմ այն պատճառով արդեօք, որ եւս
Վարդաշէն մտնելով աղատվում էի մոռնալ մնալու
և ուրիշ խօսածը չը հասկանալու աննախանձելի
զրուցութիւնից, կամ թէ այլ մի պատճառով ինձ
Վարդաշէնը իր արտաքին տեսքից աւելի բարե-
կարգված երեցեալ, քան թէ թաթարների գիւ-
ղերը, ինձ փողոցները աւելի մաքուր երեցեան,
տները աւելի յարմար չինած: Եւ յիշելով իմ աչ-
քիս ընկաւ քարաշէն տների մի շարք, որոնք ա-
ղիւստով էին ծածկած, փողոցների վերա մի քանի
տեղերում աղբիւրներ քարապատ աւաղաններով,
և այլն:

մար ամենայնաբար տեղը, նոյնպէս ցոյց տալ ցանկը
ժամանակի տեսողութիւնը մի և նոյն տեղում, որի
վրա մեր ռուս տորոնատները ոչինչ ուշադրու-
թիւն չեն դարձնում:

Ուրեմն նշանակում է, գլխաւոր հարցն է՝ աւե-
լացնել ներկող նիւթի քանակութիւնը տորոնի
արմատի յայտնի կշռի մէջ: Այդ մի և նոյնը ա-
սում է և պ. A. Rieu (Րիէօ) իր նամակի մէջ, որ
ուղղված է „Moniteur Scientifique“ օրագրի խմբ-
ագրին, որ մի և նոյն ժամանակ հաստատացնում է
թէ կարելի է աւելացնել ներկող նիւթի քանա-
կութիւնը արմատի մէջ 3 մինչև 4 անգամ (տես.
„Техн. Об. № 5, երես 326“):

„Кавказ“ լրագիրը որ իր բոլոր տեխնիկային
իմաստութիւնը այդ հարցի մէջ քաղում է „Тех-
нич. Сборн.“ օրագրից, չը գիտեմ ինչ պատճառով
ամենեւին չէ յիշում պ. Րիէօի նամակի մասին, —
երևի այն պատճառով, որ պ. Rieu ցոյց է տալիս
ուրիշ ճանապարհ տորոնը փրկելու, քան թէ մեր
լրագիրը ընդդէմ դրուող է կատարակաւ:

Սովորապէս, չարուհակում է պ. Գիդկովսկին,
տորոնի ցանքերին հետևում է հողի այնպիսի սպա-
ռումը, որ ոչ մի պարարտացնող միջոց վերա-
կանգնեցնել չէ կարող *): Այդ պատճառով գործ-
նական հետազոտութիւնը ցոյց է տուել, որ ներ-
կող նիւթի պարունակութիւնը նոյն է մնում, եթէ

*) Այդ հարցը դեռ հետազոտած չէ և ուրեմն
զուգընթաց ուրիշ հարցերի հետ տորոնի մասին
դեռ պիտի վճռվի պարարտացնող միջոցների աղ-
ղեղութեան մասին արմատի ներկող նիւթի քա-
նակութեան և յատկութեան վրա:

Ս. Խ.

Ինչպէս եւ յետոյ տեղեկացայ, այս գիւղը կազմ-
ված է հայերից (որոնք գլխաւորապէս ուղիներն են
խօսում) վրացիներից, թաթարներից և հրէանե-
րից: Բնակիչների թիւն վերաբերութեամբ եւս
գոթադրապէս ճիշդ տեղեկութիւններ չը կարողա-
ցայ ստանալ: Մինի խօսքով գիւղը մօտ 1000
սուն ունի, իսկ մէկ ուրիշ ասումը էր 2000-ից
աւել կը լինի դրանց թիւը: Հայերից շատերը
ղէպի Վարդաշէն գաղթել են թիֆլիսից, Ղարա-
բաղից և այլն և չը նայելով որ նրանք գրեթէ ա-
մենք խօսում են հայերէն, բայց ուղիներէն նրանց
մօտ աւելի տարածված լեզու է և դրանով խօ-
սում են մինչև անգամ չափ վրացիներ և հրէա-
ներ:

Այն լաւ տպաւորութիւնները, որ եւս նախա-
պատրաստվել էի ընդունելու գիւղ մտնելու ժա-
մանակ, գոթադրապէս ցրվեցան, երբ որ ինձ մտքին
մէկ երկարական քարաշէն տուն, ուր եւս պէտք է
մնայի գիւղերը: Այդ տունը Վարդաշէնի հարուստ-
ներից մէկին է պատկանում և տանտէրը, որ իմ
առաջ դուրս եկաւ, առաջին խօսքերով յայտնեց
որ և Նուխու մի բէկ երբ գալիս է դրանց գիւղը,
նրա մօտ է բնակում: Գրանով ուղում էր ինձ
հասկացնել, որ ինձ էլ պէտք է պատուի այն բէկի
պէս: Բայց երբ եւս մտայ երկրորդ յարկի պա-
տըգամբի վերա, արդէն նկատեցի, որ դուրսի
տեսքը բոլորովին հակասում էր ներքին կարգա-
ւորութեանը: Թաթարների գիւղերի մէջ եւս տես-
նում էի շատ անգամ պատուահաններ առանց ա-
պակու, բայց յատակի վերա կային խալիլներ և
բարձր, պատերը խտակ սրած, զարդարած էին
ղէպերով, ամեն տեսակ պղնձեայ և արծաթե
րեղէնները աւելացնում էին սենեակներին մի ա-
ռանձին յարմարութեան ձև չորհուրէ: Իսկ վար-
դաշէնցու այն տունը, ուր ինձ իմ բազուս և գիւղի
տանուտէրը տարան (ընթերցող թող չը մոռանայ
որ այդ ամենահարուստներից մէկի տունն էր,
որ թիկնիկների մեծ այգիներ ունի, որ իր այգի-
ների պտուղներից զինի և արագ է պատրաստում
և մի և նոյն ժամանակ փողը ընտանիք ունի) թէ և
ունէր մէկ փայտեայ յատակ և սենեակի մէջ դը-
րած էին մի անկողնակալ և երկու երեք աթոռ-
ներ, բայց պատուահանների պակասներ կտարած
լինելով միջոց էին տալիս ծիծեռնակներին սե-
նեակի մէջ իրանց բռնեք չինելու, որ ի հարկէ
սենեակը մաքուր պահպանելու չէր նպաստում:

Թաթարները եթէ փողը ի շատէ միջոց ունեն,
այս միջոցները գործ են դնում իրանց բնակա-
րանը քանի կարելի է աւելի յարմար կարգաւոր-
ել, ուշադրութիւն են դարձնում իրանց հաշուետի
վերա, որ նա եթէ ձոյն չէ գտնեալ խտակ և չը
պատուված լինի: Վարդաշէնցիս ընդհակառակ
ցիւրիս սովոր էր երևում և նրա հագուստը այն
զրուցիւնն մէջ էր, որ նայողը կարող էր միայն
աստուղ տեսնելու իսկ երեսը այնպիսի ծուկնը-
ներից էր բաղկացած, որ մինչև անգամ թոյլ չէր
տալիս նախադուշակի նա ինչ նիւթից էր չինած
կամ ինչ գոյն ունէր իր նոր եղած ժամանակը:
Թաթարները ճշմարիտ է (և մասնաւոր կանայք
և երեխաները) շատ անգամ բորիկ ոտներով են

տորոնը մշակվում է մի և նոյն տեղի վրա ոչ ա-
ւելի քան 12 տարի: Բացի սորանից անհրա-
ժեշտ է ուսումնասիրել տորոնի վրա Rhizoctonia
Rubie գորգացման պայմանները, որ շատ վնաս-
ակար է արմատի համար, նոյնպէս և ոչ պակաս
վնասակար երկու տեսակ կենդանիների ներգոր-
ծութիւնը, և գտնել արմատական միջոց նրանց
ոչնչացնելու համար: Տորոնի մշակութեան
առաջադիմութեան համար անհրաժեշտ է
ըմբռնել և մի և նոյն ժամանակ պայմանները
և արմատի հոգի մէջ մշակութեան ժամա-
նակի տեղ ուղղութիւնը, արմատից ստացվող ներ-
կող նիւթի ամենամեծ քանակութեան և ամենա-
լաւ յատկութեան վերաբերութեամբ:

Յետոյ նա շարունակում է «տորոնատէրերը
պէտք է յանձնեն արդիւնագործութեան ոչ թէ
տորոնի չորացած արմատը, կամ ջարդված տո-
րոնը, այլ հում տորոնի արդիւնագործութեան տեղի
վրա շուտով մշակել նրանից էտորակալը» և աւե-
լացնում է՝ ցանկալի է որ յարուցվէին տորոնի
բուսման տեղի վրա այն արդիւնագործութիւնը,
որը տային յետագայ մշակութեան համար հար-
կաւոր արդիւններ, ինչպէս օրինակ ծծմբաթիւն,
սօզա, պետրոլեյան էֆիր, տակաւների մեղե-
նայական պատրաստութիւնը և այլն:

Այն այն միջոցները, որ առաջարկում է պ.
Գիդկովսկին տորոնի գործարարներին համար: Սորա-
նից երևում է, որ պարոնը հնարաւոր է համա-
րում տորոնի մրցումն արվեստական աղիւղարին
հետ միայն այն ժամանակ, երբ լուծված կը լինի
քիմիա-ֆիզիոլոգիական խնդիրների մի ամբողջ
շարք, որը այդ բոյսին վերաբերում են, և որ կան

մանգալիս, բայց իրանց օրը հինգ անգամ կա-
տարվող նամազը նրանց ստիպում է լացվելու,
իսկ վարդաշէնցի հայերը, որովհետեւ մահմետական
չեն, կարծես աւելորդ էլ են համարում լուացվե-
լու:

Թաթարների բոլոր վերոյիշված յատկութիւն-
ներին պէտք է աւելացնեն նրանց անսահման
հիւրասիրութիւնը, որ երեւմիս այնքան ընտիր էր,
որ մինչև անգամ ինձ դժուար էր ընդունելու,
բայց եւս միջոց չունէի առանց նրանց շատ խոր
վերաւորելու կամ նրանց հիւրասիրութեան նշան-
ները մերժելու կամ դուրս փոխարէնը վարձա-
տրութիւն առաջարկելու: Եւ չը նայելով որ նրանք
հիւրին ամենաճոխ և ամենահամեղ խորագին են
առաջարկում, այնու ամենայնիս ներողութիւն են
խնդրում որ բաւական չը պատեցին հիւրին:
Նրանց համար ամօթ կը համարվէր, եթէ նրանք
իրանց հիւրի ձիւնները չը կերակրէին: Վարդա-
շէնի մէջ ինձ հետ ընդհակառակ ուրիշ կերպ վար-
վեցան—ինձ ոչինչ կերակուր չառաջարկեցին այլ
միայն մի բաժակ օղի որ եւս մերժեցի: Տեսնելով
որ վարդաշէնցիք շատ բանում թաթարների սո-
վորութիւններ են ընդունել, եւ կարծում էի որ և
հիւրասիրութեան կանոններն էլ նոյն կը լինէին,
այս պատճառով եւս ոչինչ չը խնդրեցի ուտելու,
կարծելով որ եթէ ինչս չընդրեմ ուտելու, պէտք է
փող առաջարկեմ որ նրանք չեն ընդունել, ուրեմն
լաւ կը լինի սպասել, բայց իմ սպասելը տեղի
երկրորդանից մինչև միւս առաւօտը և եւս դուրս
պէտք է դնայի առանց մի կտոր հաց կերած լի-
նելու: Գուրս գալու ժամանակ միայն ինձ մի
ղէպը ցոյց տուեց որ եւս կարող էի կերակուր
խնդրել և վճարել դրա համար: Այդ ղէպը դո-
րանում էր, որ իմ ձի նստելու ժամանակ ինձա-
նից 50 կոպէկ փող խնդրեցին այն զարիի համար
որ տուել էին ձիաներիս և մի մանթիլանցից փո-
խանակ ինձ կէսը վերադարձնելու եւս ստացաւ
դորանից պակաս: Գուրս գալու ժամանակ եւս
ձիս պէտք է նախ թայի—մի հայ երիտասարդ
տարաւ ինձ թաթար նախադի մօտ օրին եւս հայ
երիտասարդից որոշված գինը վճարելուց յետոյ,
լսեցի ինչպէս դա թաթարներէն նախադիին համար
մէկ աւելորդ շայի դադեցիս: Այս տպաւորու-
թիւնները բաւական տիւր արդեցութիւն գոր-
ծեցին իմ վերա և եւս քաղցս մոռանալով մտած-
մունքի մէջ ընկած հեռացայ այդ անհիւրասէր և
չանասէր գիւղից:

Նրիկոյան թէյ խմելու ժամանակ (որին ինչ-
պէս ասացի փորձելով մի կտոր հացի օղի էին
առաջարկել) եւս իմ հիւրասիրողին իմ մօտ նըս-
տացրի և նրան թէյը խմացնելով իրանց գիւղի
մասին էի խօսացնում, ցանկանալով գիւղի և նորա
բնակիչների մասին տեղեկութիւններ հաւաքելու:

Իմ հիւրասիրողի առաջին խօսքերը (ինչպէս և
նկատել էի ուրիշ հայ գիւղերի մէջ) դանդաղեց
էին: Այս գանգաւորները վերաբերում էին ամենա-
տարբեր նիւթերին՝ մեր գիւղը հարուստ է, բայց
ժողովուրդը փիս ժողովուրդ է, ասում էր նա ինձ
—ամեն մէկ անհամաձայնութեան հետեւանք այն
գիւղի խնդիրներ, որոնց լուծելը աւելի հեշտու-
թեամբ թոյլ կը տայ մրցել արվեստական աղիւղ-
արին հետ, քան թէ „Кавказ“ լրագրի տորոնի
է կատարակաւ:

Չը մոռանալու է այն, որ պ. Գիդկովսկու պրո-
գրամը դեռ եւս բաւական անկատար է: Որինակ
նա չէ ասում ոչ մի խօսք սերմերի յատկութեան
մասին, որը կարող են աշխատել (վրժոթ-
դաստա), չէ յիշում ոչինչ հողի մշակութեան մի-
ջոցների մասին, ոչ էլ տորոնի արմատի չորաց-
նելու մասին, որ մեղանում լինում է շատ նահա-
պետական կերպով, և այլն:

Թէ և պ. պ. Գիդկովսկի և Րիէօ առաջարկում են
վերեւ յիշված միջոցները տորոնը պահպանելու
համար, բայց ըստ երևոյթին նրա իրանք համոզ-
ված չեն այդ հարցերի վճելու աղողութեան մէջ:
Այդպէս օրինակ պ. Րիէօ, „Moniteur scientifique“
լրագրի խմբագիրն իր ուղղած նամակը վերջաց-
նում է հետեւեալ խօսքերով: «Աստուծա՛ տայ
որ մի անգամ ստիպուած չը լինէինք
բացակայելու ինչ էս» տորոնացի մշակութիւնը
վախճանվել է:

Իսկ պ. Գիդկովսկին, տորոնը պահպանելու հա-
մար միջոցներ առաջարկելուց յետոյ, ասում է՝
տորոնի արվեստական աղիւղարին կատարելա-
պէս բռնում է տորոնից ստացվող նիւթերի տեղը,
ուտել ամենալաւ գործարարները, որը առաջ տո-
րոնից նիւթեր էին պատրաստում, արդէն այժմ
թողնում են տորոնի մշակելը, չը կարողանալով
մրցել արվեստական աղիւղարին հետ (ափսոս որ
գործարանատէրերը չէին կարողում „Кавказ“ լը-
րագրի յօդվածները, եթէ ոչ անպատճառ կը

է լինում որ մինը միւսի տունն է այրում և այդ
սովորութիւնը ահա արդէն մօտ 10 տարի է որ
մեզ մօտ մտած է և շատ վնասներ է տվի մեր
գիւղին: Որքան հարուստ մարդիկ այս պատճա-
ռով աղքատացան և մնացին առանց որ և իցե-
ապահովութեան իրանց ընտանիքով:» «Ինչի՞ չէ՞ք
կարգում ձեր մէջ մէկ գիւղական դատաստան
ձեզանից ընտրած դատաւորներով որոնք ձեր մի-
ջից մարդիկ լինելով ճանաչէին ձեր պէտքերը և
նրանց դարման տային—այսպէս են անում Գաղա-
տանիցը և ինչ որ նրանք կարող են իրագործել,
ձեզ համար էլ չը պէտք է դժուարութիւն լինէր»,
եղաւ իմ պատասխանը:

«Մենք ունենք այսպիսի դատաստան, ընդմիջեց
ինձ վարդաշէնցին, բայց մեր դատաւորները կա-
շառակեր են»:

Մենք սաստիկ մեծ հարկեր ենք վճառում՝ ա-
մեն տունից 17 բուր 49 կոպէկ, այնպէս որ եթէ
հաշենք որ ունեւորները շատ անգամ պէտք է վը-
ճարեն իրանց աւերած գիւղակիցների համար
հարկը մարդազուլա հասնում է մինչև 10 բուր
տարեկանս:

Ինձ միայն մի բան զարմացրեց այս բոլոր ան-
թիւ գանգաւորներ մէջ, որ իրանք գիւղացիք ոչինչ
արգելք դնել չեն փորձում այն վնասներին, որոնք
իրանք լաւ հասկանում են և որ գուցէ գանգաւոր-
վողն էլ կը բերի իր հարեանին պատահած ժա-
մանակ: Նրանք գանգաւորում են, որովհետեւ սո-
վոր են և սիրում են գանգաւորի, այդ նրանց պա-
հանջ է դարձել: Եթէ կը դնէք հայերի մի խումբ
արքայութեան մէջ էլ, նրանք հնար կը գտնեն իրանց
վնասելու և բոլոր նրանց տվածից օգուտ չը փա-
ղելով, կը սկսեն կրկին գանգաւորել: Հշմարիտ է
գուցէ որ ոչինչ առաջարկում լինի հասկանալի և
կարելի չէ եթէ մարդը գոհ է բոլորովին իր գրու-
թիւնից, բայց գոհ չը լինել և ճար չը որոնել դը-
րութիւնը բարեկարգելու համար, մասնաւոր նիւ-
թապէս ապահոված լինելով, այդ ոչ միայն ան-
չարժութեան այլ և քաղաքակրթվելու անընդու-
նակութեան նշան է:

Յուլիսի 27

Ա. Արծրունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Սեպտեմբերի 19-ից սկսվելու է Թիֆլիսում
ի տալիս օպերայի արքունիքը:—Տես-
նենք ինչ օպերա կը տայ մեզ պ. Նարեկինը...

Թիֆլիսի Գուստիլիան հրապարակի վրա օգոս-
տոսի 21-ից, պ. Վլոքի նոր շինած ցիւրկում
սկսվել են ներկայացումները:

„Новости“ լրագրում կարգում ենք, որ Ս. Պե-
տրոուրովում կազմվում է մանկաբարձ կա-
նանք ընկերութիւնը: Ընկերութեան մօտ կը լինի
մանկաբարձական հիմնարկութիւն, ծննդականների
համար բնակարաններով:

Օգոստոսի 21-ին Թիֆլիսում մի երկար չորու-
թենից յետոյ, վերջապէս լաւ անձրեւ եկաւ: Ջեր-
մաշափը ընկաւ քանի մի աստիճաններով:

սկսէին մրցել և սկսում են պատրաստել արվես-
տական աղիւղարին: Իսկ երբ արվեստական աղի-
ղարին վրա գնեք կիջնեն, նրա պահանջը կը գե-
րազանցէ այժմանից և սորանով կը պակասեցնէ
բուսական ներկող նիւթերի, մասնաւոր արեւել-
քից բերվող տորոնի վաճառահատութիւնը: Այդ
պատճառով շուտով տորոնի մշակութիւնը և նրա-
նից ներկող նիւթերի պատրաստութիւնը կը նուազի
և վերջապէս պէտք է բոլորովին դադարէ, մինչև
անգամ այնպիսի յատկութեան տորոնը, ինչպէս է
մեր Գիդկովսկին: Եւ նա էլ առնող ինչ գտնի, չը
նայելով նրա համեմատական բարձր յատկու-
թեանը: Պ. Գիդկովսկին վերջացնում է իր յօդ-
ված հետեւալ խօսքերով: «Աղիւղարին արդիւնա-
գործութիւնը մեզ մօտ պատուաւորվելով, կազատէ
կովկասի պողաբեր հողերի անագին տարածու-
թիւնները, որը այժմ գտնվում են տորոնի ցան-
քերի տակ, և հետեւաբար արդիւնագործութիւնը
և նշանաւոր գումարներ կը դիմեն նոր հարստու-
թիւնների մշակութեանը»:

Ուրեմն, պ. խմբագիր, եւս կարծեմ որ դուք հա-
մոզվել էք այժմ, թէ հարցը, որ դուք այդքան
հեշտութեամբ վճել էք, այնքան հեշտութեամբ չէ
վճվում, որ ձեր տորոնի էկստրակտը անկարելի է
անուանել որ զգուշ մաղրող է կատարակաւ և
որ եւս դեռ մեզ վարվեցի անուանելով ձեր լրա-
գիրը միայն տարակուսութիւնները յա-
րուցադրելու:

Ս. Խօջայեան

«Արարատ» ամսագրի յոլիսի տետրակը նոր ենք ստանում (օգոստոսի վերջին օրերին)։ Այդ տետրակի մէջ տպւած է վերջապէս «Հիմնական ծրագիր ձեւաբանի Ս. Էշմիսեանի»։

«Могилевск. Губ. Вѣд.» լրագիրը հաղորդում է որ Մոգիլեւի նահանգում գիւղացիները աչքի առաջ ունենում մտցնող ընդհանուր վերնորոշողութիւնը սկսեցին աւելի մեծ եռանդով հողաւորները վերադարձնելու ուսումնարանները բանալու մասին։ Ուսումնարանները պահպանելու համար գիւղացիները վճարեցին տուրք հաւաքել իրանց մէջ։

Ռուս լրագիրները հաղորդում են, որ եւրոպական Ռուսաստանի մասում նոր կարգադրութիւն է արած, որ այսուհետեւ մէկ տեղից միւս տեղ ճանապարհորդելու համար հարկաւոր չէ պօզօրօ ժնայա (ներքին ճանապարհորդութեան համար եղած անցածքներ)։ Բէէն իւրաքանչիւր վերադարձնողը պարտաւոր է իր կողմից, բայց այդ պարտքն կանէ, որքան անցածքներ վճարելու էր նստում ճանապարհորդի համար։

Խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ տիկին Սրբուհի Կրիկեանի «Տոմար ընտանեկան» անունով օրացոյցը 1874—1875 տարիների համար։

Շնորհակալութեամբ ստացանք Փարիզից մի քանի քրիստոնէական լիզուր, հետեւող վերնագրով «Mines de Tkhivoni» — par M. A. Pernolet. (Տիւրքիայի հանքերը)։ Մ. Ա. Պերոլէ — Այս զբոսիկի մասին տես «Ներքին տեսութեան» մէջ տպւած յօդւածը։

Ախալցխայից մեզ հաղորդում են, որ օգոստոսի 22-ին այնտեղի նահանգական դատարանում քննուել է պ. Ազնաւուրեանցի գործը պ. Բաթումեանի հետ։ Դատարանը վճարեց դադարեցնել պ. Ազնաւուրեանի գանգաւոր մինչեւ նոր դեպքաւորական հաշիւներ քննուեն։

Ախալցխայից մեզ հաղորդում են՝ «մեր երեւոյթները օգոստոսի 4-ին ներկայացրին «Շուշանի» ողորդութիւնը և «Թատրոնային» վոլը։ Ներկայացումը շատ յաջողակ էր, այնպէս որ հասարակութիւնը խորհրդով կրկին մի ներկայացում տալ կանանց համար (առաջին ներկայացումն օգոստոսի 11-ին տեղի ունեցաւ)։ Բայց որովհետեւ և այդ երկուսը ներկայացումն ամենքը չէ կարողացան տեսնել, թատրոնասերները ներկայացրին մի և նոյնը ձրի, հասարակութեան խնդիր էր դա սի համար։ Ա. և Բ. ներկայացումներից գոյացաւ 103 ռուբլ, որից ծախսեցին 47 ռուբլ, մնացած 56 ռուբլ թատրոնասերները տարելու են շահեցնել Ախալցխայի բնակիչ համար։ Յոյս կայ, որ Ախալցխայում կարելի է տարին հինգ պայպիսի ներկայացումներ տալ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԻՐԻՍԵԼԻ ԺՈՂՈՎՐ

ԲՆԻՐԻՍԵԼԻՆԻ յայտնի է, որ այս տարի Ռուսաստանի առաջարկութիւնով կայացաւ Բրիւսելում մի կոնգրէս, որտեղ զանազան երկրների եւրոպական պետութիւնների պաշտօնական և մասնաւոր ներկայացուցիչները Այդ ժողովի, որի խորհրդակցութիւնները մինչեւ այժմ դեռ շարունակւում են, նպատակն է քննել պատերազմող կողմերի իրաւունքի զանազան ձեւերը։ Այդ խորհրդակցութիւնների մասին կարգաւոր զանազան տեղեկութիւններ լրագրիւրի մէջ տեսնում ենք, թէ ինչպիսի գիտնականութիւնների հետ պէտք է պատերազմել կոնգրէսը և թէ ինչ գրութեան մէջ են կոնգրէսի վերաբերութեամբ այն պետութիւնները, որոնք ուղարկել են Բրիւսել իրանց ներկայացուցիչներին։ Այս առիթով «Temps» Ֆրանսիական լրագիրը նկատում է հետեւյալը։ Ռուսաստանը կոնգրէսի խորհրդակցութիւնների նպատակ է դրել համաձայնեցնել պատերազմական անհրաժեշտ պահանջները մարդասիրութեան հետ, բայց որովհետեւ այս խնդիրը չէ կարելի լիապէս լուծել, մնում է բաւականաչափ նորա մօտաւորապէս պարզելով։ Մի քանի հարցերի վերաբերութեամբ գրեթէ

բոլոր պետութիւնների օգուտները մինչ այն աստիճան հակառակ են միմեանց, որ այդ առիթով վիճաբանութիւններն անգամ անկարելի են։ Օրինակ Անգլիա չէ թող տալիս, որ կոնգրէսի խորհրդակցութիւնները վերաբերեն ծովային իրաւունքին։

Մի քանի այլ տեղերում թէև կարելի է հարց դնել, բայց նրանց վճռել անկարելի է։ Օրինակ այն դերի մասին, որ պէտք է խաղան տեղային բնակիչները երկրի մէջ թշնամութեան ժամանակ, Ռուսաստանը հաւատացնում էր, որ նա երբեք մտադիր չէ եղել սահմանափակել բնակիչների ինքնապաշտպանութիւնը։ Նիդերլանդները, Բելգիա և Սպանիա սկզբից յայտնեցին, որ նրանք չեն հրաժարուի պաշտպանութեան ոչ մի հնարքից, չեն թողնի ոչինչ, որ կարող էր թողնուի պաշտպանութեան դրութիւնը, չեն աղաթի քաղաքացիներին նրանց պարտականութիւններից դէպի իրանց հայրենիքը։ Իսկ ինչ կը վերաբերի պատերազմական օրէնքների մի քանի մանրամասնութիւններին, գուցէ աւելորդ էլ էր այն պիսի հարց դնել, որ քաղաքի վրա թշնամութիւնը արձակելուց առաջ, յայտնուէր տեղային կառավարութեանը։ Կամ որքան կարելի է խնայել արձանները և շինութիւնները, այդ երկու կանոնները վաղուց մտքած են ընդհանուր մարդկային իրաւունքների մէջ։ Աւելորդ է նմանապէս արդիւն անպաշտպան քաղաքների վրա թշնամութիւնը արձակել։ Այն միտքը հաստատելու համար, որ ներկայ կոնգրէսից չէ կարելի սպասել պատերազմի զարհուրանքների թիւթակցիւնը, հարկաւոր է ցոյց տալ այն երևոյթը, որ գրեթէ բոլոր պետութիւնների ներկայացուցիչները ընդդիմանում են առաջարկութեանը, թէ պէտք է հեռացնել այն քաղաքի բնակիչներին, որի վերա թշնամութիւն են արձակելու։ «Նոյն կոնգրէսի առիթով» «Independance Belge» լրագրում են «Եթէ հաւատարմեք մեր ստացած տեղեկութիւններին, խորհրդակցութիւնները կը շարունակուին մինչև ներկայ ամսի վերջը։ Այժմ ընդմիջում է նուաճւում երկրից հարկ առնելու հարցը, բայց երեւի և այդ հարցը կը յետաձգուի, որովհետեւ նրա մասին չեն կարողանում համաձայնեցնել։

ՍՊԱՆԻԱ

Սպանիայի կառավարութիւնը գրեթէ բոլոր պետութիւններից ծանուցեցաւ պաշտօնապէս։ Նորերում մի սպանիական ծառայող բերեց Փարիզ սպանիական դեսպանի համար Փարիզում հաւատարմութիւնը Սպանիական կառավարութեան ծանուցելու շատ օգուտներ կը բերէ այդ երկրին, գուցէ կառավարութեան զօրքերն էլ աւելի յաջողակ կը շարունակեն իրանց գործերը, որովհետեւ այժմ Սպանիայի դեսպանները կարող են պահանջել բոլոր պետութիւններից, որ նորա ներողամիտ չը լինեն դէպի կարլոսիստները։ Սպանիայի կառավարութեան ծանուցելուց յետոյ կարլոսիստները ոչ այլ ինչ են, եթէ ոչ խռովարարներ, այդ շատ լաւ գիտեմք մարշալ Սիբանո և կասկած չը կայ, որ նա օգուտ կը բերէ այդ իրողութիւնից։

Կարլոսիստները չեն դադարում թշնամութիւններ արձակել Պիւսերդա քաղաքի վրա, որը չըջապատւած է նոցա բաղնիքի զօրքերով, որոնց զիւսակներն են Սիբանոս և Տրիստանի։ Քաղաքի բնակիչները ամենքը պատերազմում են և պաշտպանում Պիւսերդա, նորերում նոցա դուրս եկան քաղաքից և յարձակուելով կարլոսիստների վրա, նրանց բաւական զինանք պատճառեցին։ Մարտիկները շատ անբաւական են պատերազմական միջոցաւ չորաբալից, նորա անգործունէութեան համար։ Եթէ այդպէս կը շարունակուի, կարծում են որ միջոցաւորութեան մէջ փոփոխութիւններ կը լինին և երեւի Յաբալա առաջինը կը հրաժարուի։

ՆԱՍՏԱԿ ԴԱՎՐԵԺԻՑ

Քիչ չէ պատահել մեզ կարգաւոր Մշակի՝ թերթերի մէջ զանազան նամակներ և առանձին յօդուածներ Պարսկաստանի հայերի մասին, որը ներկայացրում էին նոցա թէ մտաւոր և թէ նիւթական անմխիթար դրութիւնը։ «Մշակի» մէջ շատ անգամ յարուցւած է այն հարցը, թէ Պարսկաստանի հայերի ապագան մի բարի վախճանին չէր հասնում, թէ մի կողմից օտարազգի միսիոնարները որսորդութիւնները, միւս կողմից տեղական հարստահարութիւնները մի օր հայ անունը կանանկացնէին այդ երկրից։

Ես այդ ճամբարութիւնների դէմ վիճելու ոչինչ չունեմ, միայն իմ ցանկութիւնն է մասնաւորապէս բացառել այդ աննախանձիկ դրութեան պատճառները։

Պատճառները խիստ պարզ են։ Նախ հայերը Պարսկաստանում չըբազմաթիւ են, այնպիսի ազգերով, որը լուսաւորութեան աւելի ստոր աստիճանի վերա են կանգնած, քան թէ իրանք, ուրեմն նրանց օրինակ առնել կամ օգուտ քաղել կարող չեն։ Երկրորդ Պարսկաստանի հայերը թէ առևտրական և թէ այլ միջոցներով յարաբերութիւններ չունեն եւրոպացուց հետ, որ գոնեա նոցա ազդեցութեան տակ ճանաչէին կրթութեան կարևորութիւնը։ Երկրորդ, աւելի զգուշաւոր պատճառն է աղքատութիւնը, խիստ յաճախ կրկնուող սովը և տեսակ տեսակ հիւանդութիւնները մինչ այն աստիճան զբաղեցրել են ժողովրդին, որ նրանք աւելի հացի համար են մըտածում, քան թէ ուսման և կրթութեան, որ միակ ճանքն էր նոցա համար հացի դիւրութեամբ վաստակելուն։

Մինչև այսօր չունենք Պարսկաստանում գոնեա մի անձն, որ կատարեալ եւրոպական կրթութիւն ունենար։ Մի քանի եղածները տէրութեան պաշտօններում, աւելի իրանց գործերում են զբաղուած, քան թէ ժողովրդի վիճակով։ Ուրեմն ոչ պէտք է առաջնորդէր նորանց դէպի կրթութիւնը։ Երկրի և պետութեան սովորութիւններն համեմատ ժողովրդի վիճակը միշտ յանձնուած է եղել թեմական հոգևոր առաջնորդներին։ Միշտ զգաւ են յանձն առած այն հոգաբարձութիւնը՝ հսկել իրանց հօտին և տանն նրանց դէպի յառաջադիմութիւն։ Արդեօք խղճմտանքով կատարել են իրանց պաշտօնը։ Դժբախտաբար ստիպուած ենք խոստովանել թէ ոչ, Հոգևոր առաջնորդները գալիս ու գնում էին, մինչ միւսի յետքից փոխում էին, առանց որ և իցէ արդիւններ գործ թողնելու։ Եւ ցաւալին այն է, մի քանիսի գործածը՝ նրա յաջորդ փոխանակ աւելի օգուտէ տկարացնելու, բոլորովին ոչնչացնում էր։

Վերջապէս գտնուեցան մտածող անձինք, որը հասկացան՝ բոլորովին կուրօքն հպատակել հոգառաջնորդներին կամքին, և իրանց որդիները կըթրութիւնը և ապագան թողնել նրանց հաճոյքին, այդ մի բարի հետեւանքին չէր հասնի, հարկաւոր էր ինքնուրոյն գործել և ինքնուրոյն մըտածել մասնով սերունդի լուսաւորութեան մասին։ Վերջին խռովութիւնները Հոգևոր Գրիգոր եպիսկոպոսի դէմ՝ ժողովրդի բազմատարեան բողոքների արտայայտութիւնն էր։

Վերջապէս այդ մարդը փոխեցաւ։ Նորան յաջորդեց այժման Արքայապետական թեմական Անդրէաս եպիսկոպոսը։ Նորին սրբազնութեան Դավիթ Գալէն յետոյ եղած մի քանի փոփոխութիւնները, կատարելապէս երաշխաւորում են այն կարծիքը, թէ երբ հոգառաջնորդ ժողովրդի մըտածող մասնի հետ համակուր և համախառն է ընթանում, միշտ և միշտ կարելի է յուսալ, թէ ամենամաքազա և անտարբեր ժողովրդի մէջ ևս կարելի է իւրաքանչեւ ազգագուստ հիմնարկութիւններ։

Այս թէ որպէս։ Հայր սրբազանի Դավիթ Գալէն յառաջ Ազգային դպրոցը թշուառ վիճակի մէջ էր գտնուում։ Նա չունէր ոչ հոգաբարձութիւն, ոչ տեսուչ և ոչ օրինաւոր վարչապետներ։ Իսկ նորա նիւթական դրութիւնը այն չքաւորութեան մէջն էր, որ էսօր էգուց դպրոցը փակուելու վերա էր։ Հայր Սրբազանը մի քանի մարդաբեր պարոնների հետ նախ հոգ տարան զըպրոցի համար օրինաւոր հոգաբարձութիւն նշանակել և ընտրուեցան՝

- ա. Աստուածատուր-խան Սէթ-Խանեան։
 - բ. Աղայ Արզուման Նաղարէկեան։
 - գ. Աղայ Աստուածատուր Աւագրէկեան։
 - դ. Գովալիմ աղայ Ֆէնէրլեան։
 - ե. Աղայ Աստուածատուր Ղարաբէկեան։
 - զ. Մահմետ Սիմօն Թումանեան։
- Հոգաբարձութիւնը իւր պաշտօնի մէջ մտնելէն յետոյ, Նորին Սրբազնութեան ձեռնադրութեամբ, սկսաւ նախ և յառաջ հոգ տանել դպրոցի նիւ-

թական ապահովութեան համար, որ ամենակարեւորն էր։ Գպրոցը չունենալով առանձին արգիւնքի աղբիւրներ, մնում էր մէկ միջոց միայն փոքր ի շատէ նորան ապահովելու, այն է կամաւոր նուիրաբերութիւնները։ Գուցէ նուիրատուների համատեղութեամբ ընդդէմ լինէր, այդ պատճառաւ ես զանց արի իմ նամակի մէջ դնել նոցա անունների ցուցակը, բաւական եմ համարում յայտնել, որ նուիրների գումարը հասաւ բաւականին խոշոր թուանշանի, այն է՝ 28020 դրամն այսինքն 8000 ռուբլի։ Բացի հայերից մի քանի օտարազգի անձինք նոյնպէս մասնակցեցին խեղճ ժողովրդի կրթութեան գործին։ Գրեաւ էին՝

Բօջէթ-էֆէնտին (տաճկաստանի հիւպատոս) 1000 դրամ։ Խարիզօնիտի եղբարը (նշանաւոր Երան վաճառականաց տուն) 2500 դրամ։ Փայախան Սէթթի (Պարսիկ գնեցաւ) 600 դրամ։

Որովհետեւ դեռ ստորագրութիւնը չարձանակվում է, յոյս ունենց յիշեալ մարդասէր անձանց գործերութիւններն կը գրգռեն շատերի բարի նախանք մասնակցի լինելու այդ ազգագուստ գործին։

Մ. Ս. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Ֆրանսիական» «Soir» լրագիրը հաւատացնում է, որ մարշալ Բազէնի փախուստը պատրաստված էր տէրութիւնից, բայց լրագիրը ասում է՝ մենք կը համբերենք որ այդ գործի մասին դատաստանական քննութիւնը վերջանայ, եթէ ոչ մենք այժմ էլ կարող էինք յայտնել այն նշանաւոր անձի անունը, որի հետ Բազէնը գրագրութիւն ունէր բանդից։

«Allg. Zeitg.» լրագիրն հեռագրում են, որ օգոստոսի 14-ին մարշալ Բազէնը, Բազէնից Մայնց քաղաքով անցնելով ուղևորվեց դէպի Բրիւսել Կէօրի ճանապարհով։

Ունգարիայի ազգային-ժողովի մէջ կարգացվեցաւ օգոստոսի 14-ին կայսերական հրովարտվող որ պատուիրում է փակել նիստերը, իսկ հետեւալ սեսիայի սկիզբը կը լինի հոկտեմբերի 24-ին։

Իտալիայում տէրութիւնը շարունակում է խիստ միջոցներ գործ դնել կարգը պահպանելու համար։ Մինչև 36 զանազան ընկերակցութիւններ Ֆիրենցեի նահանգում տէրութիւնից արգելվեցան։

«Gazzetta dell' Emilia» լրագիրը պատմում է թէ Սինիգալիայի մէջ գտնվեցաւ դէպքերի մեծ քանակութիւն։ Ասում են որ գտնվեցան դաւադրութեան և հանրապետականների ապստամբութեան պատրաստութիւններ։

Շտոկհոլմի մէջ գումարվեցաւ հնազանդութեան միջազգային ժողով, որտեղ բացի շվեդացիներից, մօտ 300 անդամներ օտարազգիներ էին։ Թագաւոր մի մեծ խնձով տուեց գիտնականներին, Գալու 1875 թւին վճարեցաւ որ հնազանդները կը հաւաքեն Ունգարիայի Պէստ քաղաքում։

«Köln. Zeitg.» լրագրում կարդում ենք՝ հազիւ թէ հեռագիրը հաղորդեց մեզ թէ Թիւրքիայի տէրութիւնը Սերբիայի սահմաններից յետ է կանչում իր զօրքերը, և արդէն Բէլգրադում հրատարակվող մի սերբիական լրագիր «Vidovdan» սկսեց տարածել զանազան սուտ լուրեր և յարձակվել Թիւրքիայի դէմ։

Օգոստոսի 16-ին մարշալ Մակ-Մանօնը ճանապարհ ընկաւ դէպի Ֆրանսիայի մի քանի նահանգներ, որը յայտնի են իրանց լեզիտիմական և կղերական ուղղութեամբ։ Սան-Մարի մէջ առևտրական դատարանի նախագահը, դիմելով հանրապետութեան նախագահին ասեց, որ առևտուրը և արվեստները, առհասարակ գործերի անշարժ դրութեան մէջ լինելու պատճառն այն է, որ Ֆրանսիայում դեռ չը կայ մի հաստատ պետական ձև, չը կայ հաստատ տէրութիւն։ Սորան Մակ-Մանօնը պատասխանեց, որ այդ սխալ կարծիքն է, եթէ ասում են որ հաստատ տէրութիւն չը կայ Ֆրանսիայում։ Մարշալ ինքն նախագահ է, ազգային ժողովից եօթ տարով նշանակված լինելով, եւ այդ ժամանակամիջոցում նա կրկնեց որ կաշխատէ Ֆրանսիային շնորհիւ խաղաղութիւն և ապահովութիւն։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Annalen der Physik und Chemie» գերմանական պարբերական հրատարակութեան մէջ (№ 6) տրւեցան զօլայի Անդրէաս Արծրունցի գիտնական չորս նոր հետազոտութիւնները 1) «Ueber eine Zwillingsverwachsung des Willemitz» 2) «Optische Untersuchung des Terpeninöhlharates» 3) «Krystall. und opt. Unters. einiger harnstoffartiger Körper.» 4) Ueber zwei isomorphe Benzol-derivate»։

